| | | |
|---|---|---|
| 9. Ի պէտս ուսումնառութեան չքաւոր հայազգի օրիորդաց յիգական Մարիամեան Գիմնազիայի Աստրախանայ | 195 | |
| 10. Ի պաշտօնագրամ հոգեւորականաց . . . . | 90 | |
| Գումար տարեկան ծախուց | 6496 | 76 |
| Մնացեալ դրամագլուխք . . | 117562 | |
| Ընդհանուր գումար | 124058 | 76 |

## ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.

Ամսոյս 3ին Հայաստանեայցս առաջին Լուսաւորիչների, Ս. Թադէոս և Բարդուղիմէոս Առաքելոց տօնին հանդիսաւոր Ս. Պատարագից յետոյ Ճեմարանի Հանդիսարանում Ճեմարանական Վարչութեան որոշմամբ ուսումնարանական հանդէս կատարուեց. ի միջի այլ և այլ երգերի Ա. Լսարանի ուսանող Կորիւն Մկրտչեան ճառ կարդաց, որ ընթերցողները կըկարդան ամսատետրակիս մէջ.

—

Ամսոյս 11ին Ս. պատարագից յետոյ, խուռն բազմութեան ներկայութեամբ՝ Մայր Աթոռոյս Միաբանական Ուխտը կատարեց ի Տէր Հանգուցեալ երջանկայիշատակ Գէորգ Դ. Կաթուղիկոսի տարելիցը՝ Այդ տխուր հանդէսը վերջացաւ Գ. Լսարանի ուսանող Ա. Շահիջանեանի գրաւոր ճառով.

Անկասկած բոլոր ներկայ եղողների սրտեռանդն մրմունջն էր առ ողորմածն Աստուած — ի լոյս երեսաց իւրոց հանգուցանել զհոգի հանգուցեալ Հայրապետին, և Ս. Լուսաւորչի աթոռին պարգևել արժանընտիր մի գահակալ՝ ազգն ու Եկեղեցին կառավարելու ըստ արժանւոյն.

—

Ս. Պետերբուրգից գրումեն հետևեալը. «Երէկ (Դեկտեմ. 11ին) Սուրբ Աստուածածնի Մայր Եկեղեցում պատարագից յետոյ հոգեւորականները շքեղ հանդիսով կատարեցին Գէորգ Դ. ամենայն Հայոց Սրբազնագոյն Կաթուղիկոսի տարեկան հոգեհանգիստը. Ներկայ էին բոլոր գաղթականները, ուսանող երիտասարդութիւնը և Կոմս Լօռու Մելիքեանը».

«Ս. պատարագից յետոյ պատարագիչ քահանան յայտնեց Սինօդից ստացած ծանուցումն — ընտրել ներկայացուցիչ տեղական Հայերի կողմից Նոր կաթուղիկոսի ընտրութեանը ներկայ գտնուելու».

—

### ԹՇՈՒԱՌԻ ԱՊԱՍՏԱՆԱՐԱՆԸ.

Երկար թաղեցի ես դուռը թաղդի,
Բայց չարժանացայ մի հատ լումայի.
Բաղխեցի ամրոց, ուր փառքն է ապրում,
Ասացին, «հեռի, քեզ չենք ճանաչում».
Աշխատանքի մէջ ես տեսայ տանջանք,
Ասացի զուր է ինձ այսպիսի կեանք.
Ման եկայ գտնել բաղդի բնակարան,
Ոչ ոք չըկարաց ցոյց տալ ինձ ճամբան.
Այժմ մի հատիկ տուն է մնացել,
Ես նորա դուռը կըփորձեմ բաղխել.
Աճապարեցի դէպ ի գերեզման,
Թշուառներն այնտեղ միայն հանգիստ կան.

(Գերմաներէնից). Թադէոս Տէր Յովսէփեան.